ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ Սյունիքի մարզի Ագարակի

քաղաքային համայնքի ղեկավարի

2011 թ հունիսի 1 -ի N 186 որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սյունիքի մարզի Ագարակի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի /ծածկագրեր՝ 3.2-1 / համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար

ՀՀ Սյունիքի մարզի Ագարակի քաղաքային համայնքի /այսուհետ՝ Համայնք/ ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի /ծածկագրեր՝ 3.2-1/ համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար :

Մրցույթը կանցկացվի 2011թ. հուլիսի 28-ին՝ ժամը 11.00-ին Ագարակի քաղաքապետարանի շենքում:

Դիմող քաղաքացիները պահանջվող համապատասխան փաստաթղթերը պետք է ներկայացնեն Համայնքի ղեկավարի աշխատակազմ կամ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9.00-ից մինչև 18.00, բացի շաբաթ , կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2011թ. հունիսի 27-ը՝ մինչև ժամը 18.00-ը: Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Համայնքի ղեկավարի աշխատակազմ /ք.Ագարակ, Գարեգին Նժդեհ 5, հեռախոս՝ 0286-2-25-67/ կամ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն /ք. Կապան, Գարեգին Նժդեհ 1 , հեռախոս 0285-2-35-50/:

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՇՏՈՆԻՆ (ԾԱԾԿԱԳՐԵՐ 3.2-1) ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

ա/ պահանջվում է առնվազն միջնակարգ կրթություն,

բ/ պահանջվում է «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերի, Աշխատակազմի կանոնադրության անհրաժեշտ իմացություն.

գ/ պահանջվում է համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.